



# Հիմնական տեսակների բերքահավաքի լավագույն փորձը



# ԾԻՐԱՆ



Ծիրանը բնիկ հայկական միրգ է, այն Եվրոպայում տարածում ունի Հայաստանի միջոցով:

Ենթադրվում է, որ ծիրանի հայրենիքը հյուսիս-արևելյան Հայաստանն է:

Ծիրանի չրի ամենահայտնի արտահանողներից է Թուրքիան: Հայաստանում ծիրանը տարածված է՝ մասնավորապես Արարատյան հովտում:

Հանրապետությունում աճեցվում է ծիրանի 50 տեսակ, որոնցից ավելի տարածված են.

Ընտրասերման միջոցով ստեղծվել են

|   |                  |
|---|------------------|
| 1 | Ղևոնդի           |
| 2 | Համբան           |
| 3 | Երևանի           |
| 4 | Սաթենի           |
| 5 | Խոսրովենի        |
| 6 | Որդուարի         |
| 7 | Նախիջևանի կարմիր |

|   |                             |
|---|-----------------------------|
| 1 | Ոսկի                        |
| 2 | Վաղահաս                     |
| 3 | Նաիրի                       |
| 4 | Օշական                      |
| 5 | Վասպուրական                 |
| 6 | Արագած                      |
| 7 | Մասիս                       |
| 8 | Արարատ վարդագույն տեսակները |

## Բերքահավաք և արտահանում

Սկզբում ծիրանը հասունանում է Արարատի շրջանի Երասխ գոտում, քանի որ այնտեղ առկա է բարենպաստ բնակլիմայական պայմաններ, իսկ քիչ ուշ նաև Արտաշատում: 2011թ-ին եղանակի պատճառով ուշ հասունացավ բերքը, իսկ գարնանային անձրևները փչացրեցին բերքի ապրանքային տեսքը, չնայած նրան, որ իրականացվել էր քիմիական պայքարի միջոցառումներ:



Բերքահավաքի սկզբին շուկայում ծիրանի գինը հասնում էր 2000 դրամի: Ծիրանի բերքը հիմնականում իրացնում էին հայ և վրացի գործարարները, սառնարան-մեքենաներով արտահանում Վրաստան և Ռուսաստանի Դաշնություն: Ռուսաստան արտահանվող ծիրանի մի մասը տեղափոխվում էր օդային ճանապարհով:

Երկրի ներսում բերքի իրացմանը նպաստեցին ոչ միայն շուկաները, այլև ֆերմերները, հոգսը թեթևացնելու համար, ծիրանի բերքը վաճառում էին գործարաններին և այդ կերպ իրացվում էր միրգը:

Արարատի մարզպետի խոսքով այդ տարի իրացվել էր 13 000 տոննա բերք, որից 4 600-ը արտահանվել էր Ռուսաստանի Դաշնություն և Վրաստան:

Արմավիրի մարզում ծիրանի բերքահավաքը սկսվում է հունիսի վերջից: Կանայք արդեն վաղ առավոտյան սպասում են այգի տեղափոխող մեքենային, իսկ նախորդ օրվանից արտահանող ընկերություններն են արկղերը գյուղ հասցնում, բերքը դրանց մեջ անվնաս տեղավորելու համար: Արտահանող ընկերության ներկայացուցիչներից նշում են, որ նրանց օգնում են գյուղացիները, բերում են բերքը, կշռում, լցնում մեծ մեքենաների մեջ: Խանջյանը՝ ծիրան աճեցնելու գործում մասնագիտացված գյուղերից է:

Ծիրան արտադրողները բերքատու տարիներին 2 հա տարածքից մինչև 40տ ծիրան են ստացել, իսկ 2017թ-ին 10տ հազիվ է գերազանցել, բայց էլի դժգոհ չեն, որովհետև իրենց հատընտիր ծիրանը Ռուսաստան են ուղարկելու:



Արտահանողները պահանջները ներկայացնում են նախապես, նրանց աշխատակիցները ժամանակ առ ժամանակ գալիս են այգի բերքի որակն ու արկղերի մեջ դասավորությունը ստուգելու համար:

1 կգ հատընտիր ծիրանը արտահանում են 400 դրամով, եթե որակը փոքր ինչ զիջում է, ապա 300 դրամով: 2017թ-ին բերքը շատ չի տուժել:

Տարբեր գյուղերի կանայք իրենց օրվա մեծ մասը անցկացնում են այգում աշխատելով, նրանք բացի բերքը հավաքելուց նաև զգուշորեն շարում են արկղների մեջ, որպեսզի միրգը բարեհաջող տեղ հասնի: Նրանք այդ աշխատանքի համար վարձատրվում են օրական 6 000 դրամով: Վճարողները հանդիսանում են արտահանող ընկերություններ կամ այգու սեփականատերեր:

Ջրաշեն գյուղի սեփականաշնորհված տարածքները ունեն 120 աշխատող:

Գյուղացիներից մեկը իր 7 հեկտար ծիրանանոցը դարձրել էր ժամանակավոր աշխատատեղի բերքահավաք իրականացողների և բերքը շարողների համար: Այդ հողատարածքից, ցրտահարության պատճառով, 80 տոննա ծիրանի փոխարեն, ստացվել էր 15 տոննա:

Տարածքի սեփականատերը նշում է, որ բերքի սակավության պատճառով, իրենց ծախսերը հանած, ոչինչ չի մնում: Շահույթ են ունենում միայն արտահանողների կողմից:

Ջրաշեն գյուղի մեկ այլ բնակիչ իր 5 000մ հողատարածքում տարիներ առաջ տնկել է ծիրանի ծառեր: Նա ասում է, որ գյուղի կեսը ապրում է ծիրանի այգիների շնորհիվ:

2 տարի եղել է, որ արտահանող ընկերությունը գարնան սկզբին գյուղացիներին տրամադրել է գումար, սակայն եղանակի անբարենպաստ լինելու պատճառով բերք չի ստացվել, բայց այդ 2 տարիների ընթացքում ընկերությունը չի նեղացրել գյուղացիներին այլ ասել է, որ բերքը տան այն ժամանակ, երբ լինի: Երրորդ տարում արդեն բերք կար, և գյուղացիները հանձնեցին արտահանող ընկերությանը:

Ջրաշեն գյուղի բնակիչները 2017թ-ը համարում էին ծիրանի բացառիկ տարի, որովհետև գարնան -10 ցրտից հետո հույս չունեին, որ ծիրանի բերք կունենան:



Այս տարի Հայաստանում տաք եղանակը նպաստեց ծիրանների սովորականից ավելի վաղ հասունացմանը: Հետևաբար ավելացել է թարմ մրգերի և բանջարեղենների արտահանումը:

2018 թվականի սկզբին մրգերը և բուսական արտադրանքները արտահանվել են շուրջ 100 հազար տոննա: Իսկ 2017 թվականի նույն ժամանակահատվածում արտահանվել է 56 հազար տոննա:

2017 թվականին ընդհանուր արտահանվել է 28.5 հազար տոննա ծիրան, իսկ 2018 թ թվականի սկզբից՝ 43.5 հազար տոննա արդեն արտերկրում վաճառվել է: Արարատյան դաշտավայրում հուլիս ամսվա կեսին բերքահավաքը գրեթե ավարտված էր և աստիճանաբար անցնում էր դեպի լեռնաշղթաներ: Սակայն արտահանումը շարունակվում է:

Ինչպես նախորդ տարիներին, բերքի ավելի քան 90%-ը արտահանվեց Ռուսաստան: Փոքր ծավալները գնացին Վրաստան, Բելառուս, Ղազախստան, Արաբական Էմիրություններ, Ռումինիա և Բելգիա:

# ԽԱՂՈՂ



Խաղողը պատկանում է խաղողագգիների ընտանիքին: Ունի փաթաթվող ցողուն: Պտուղները լինում են տարբեր երանգների և կազմում են տարբեր խտությամբ ողկույզներ: Խաղողի տեսակի մեծ մասը առաջացել է Եվրոպական վայրի խաղողից, որն աճում է նաև Հայաստանում: Հասած ողկույզները քաղցր են: Խաղողի հայրենիքը Առաջավոր Ասիան է: Առկա է մշակովի խաղողի 4000 տեսակ: ՀՀ-ում տարածում ունեն Ոսկեհատ, Գառան դմակ, Ճիլար, Կախեթ, Մսխալի, Ռքածիթելի, Մուսկատ, Սապերավի, սև և սպիտակ Արաքսենի, սև և սպիտակ Սաթենի, դեղին և վարդագույն Երևանի, Թավրիզենի, Իծապտուկ, Արարատի, Ամբարի, Արենի, Արևիկ, Խնդողնի, Կարմիր կտենի, Լավարի, Տոկուն, Հաղիսի և այլ տեսակներ:

Խաղողի մատերին այլ կերպ կոչում են խաղողի վազ: Խաղողի մատ տալիս է սերմը ծլելուց հետո առաջին տարում:

Պտուղները ձվաձև են կամ կլոր: Կախված տեսակից պտուղների գույները կարող են լինել կանաչավուն, դեղին, կարմիր, սև:

Խաղողն ունի բուժիչ հատկություններ: Այն օգտագործում են թոքախտի, նյութափոխանակության անկման, նյարդային համակարգի հյուսվածության, ախորժակի կորստի դեպքում:

Օգտագործվում է թարմ վիճակում, նաև պատրաստում են գինի, կոնյակ, դոշաբ, չամիչ և այլն:

Դիմացկուն չէ ցրտի նկատմամբ: Խաղողի բերքահավաքը դեռևս հին ժամանակներից համարվում է տոն:

## Բերքահավաք և արտահանում

Խաղողի այգու բերքահավաքը ճիշտ ժամանակին կազմակերպելու, որակով բերք ստանալու համար հարկավոր է տանել նախապատրաստական աշխատանքներ: Սկզբից առանձին հողամասներում, ըստ սորտերի, պետք է որոշել սպասվող բերքի քանակը: Սպասվող բերքի հաշվարկման համար լարային կամ շպալերային այգիներում անցնում են 2-րդ, 3-րդ, 5րդ կամ 10-րդ շարքով և շարքի երկարությամբ 5-րդ կամ 10-րդ վազի վրա հաշվում ողկույզները: Հաշվարկելու համար հարկավոր է գտնել բերքատվությամբ տվյալ այգու համար տիպիկ վազեր: Ստացվող բերքի քանակի

որոշման համար հարկավոր է հաշվարկման միջոցով որոշված

տվյալ հողակտորի մեկ վազի վրա եղած ողկույզների թիվը

բազմապատկել տվյալ սորտի ողկույզների միջին

կշռին: Այգում եղած ողկույզների թիվը,

բազմապատկելով տվյալ սորտի համար

ողկույզների միջին կշռին, կունենանք

ստացվող բերքի քանակը:

Ողկույզի միջին կշիռը պետք է

իմանալ նախորդ տարիների

արտադրական տվյալներից:

Թմբային համակարգի

այգիներում

սպասվող բերքի քանակը

որոշում են հետևյալ կերպ.

Խաչաձև անցնում են այգու անկյունագծով և ամեն 10-րդ թմբի վրա հաշվում ողկույզների թիվը: Այնուհետև, լարային համակարգի այգիների նման, հաշվարկներով որոշում աճեցված բերքի քանակը: Ըստ տվյալ հողատարածքում սպասվող բերքի քանակի, պետք է կազմել բերքահավաքի պլան, նշելով անհրաժեշտ բանվորական ուժի քանակը, տրանսպորտը, պահանջվող գործիքներն ու գույքը: Հարկավոր է նորոգել ճանապարհները, նախապատրաստել բերքի վերամշակման և բերքահավաքի գույքը: Բերքահավաքի համար պետք է պատրաստ լինեն տրակտորային սայլակները, ավտոմեքենաները, ինքնաթափի մեքենաները և այլ տրանսպորտային միջոցներ:



## Խաղողի տեխնիկական սորտերի բերքահավաքի ժամկետի որոշումը



Խաղողի տեխնիկական կամ արդյունաբերական սորտերի բերքահավաքը կատարում են այն ժամանակ, երբ պտղահյութում պարունակվող շաքարի և տիտրվող թթուների պարունակությունը համապատասխանում է գինի պատրաստելու համար:

Ընդհանուր առմամբ, այս կամ այն տեսակի գինիներ պատրաստելու համար, խաղողի բերքահավաքի ժամկետը որոշելիս պետք է հաշվի առնել, որ քաղցուի յուրաքանչյուր մեկ գրամ շաքարի լրիվ խմորումից ստացվում է 0.55-0.64% ծավալային սպիրտ: Խաղողի արդյունաբերական կամ տեխնիկական հասունացումը կարող է համընկնել ֆիզիոլոգիական լրիվ հասունացման հետ, կարող է սկսել նրանից ուշ: Խաղողի ֆիզիոլոգիական հասունացման ժամկետը կարելի է որոշել 3 եղանակով՝ օրգանոլեպտիկ, անատոմիական և քիմիական:

Օրգանոլեպտիկ մեթոդ - փափկացաց պտուղները հեշտ պոկվում են պտղակոթից նրա և վրա մնում է միայն պինդ անոթաթելային փունջ: Պտուղների ծայրամասային անոթների ցանցը երևում է ի շնորհիվ թափանցիկ դարձած պտղամաշկի: Պտղամիսը դառնում է ավելի քաղցր, փափուկ և հեշտ է անջատվում մաշկից: Երբ սերմերը հասունանում են, դառնում են դարչնագույն և պնդանում են:

Անատոմիական մեթոդ - պտղակոթից վերանում է օսլան և տերևներից այլևս շաքարներ չեն հոսում պտուղների մեջ: Պտղակոթի բարակ կտրվածքը, երբ մշակվում է յոդի լուծույթով օսլայի հատիկները պարենքիմային հյուսվածքում ստանում են մուգ կապույտ գույն, որը նկատվում է անգն աչքով, դա նշանակում է, որ խաղողը ֆիզիոլոգիապես հասուն է:

Քիմիական մեթոդ – Այգուց քաղած պտուղների միջին նմուշի վրա որոշում են պտղահյութում պարունակվող շաքարների և տիտրվող թթուների քանակը: Պտուղներում թթուների քանակը հասունացման սկզբից մինչև նրանց ֆիզիոլոգիապես հասունացում՝ պակասում է, իսկ շաքարների քանակությունը այդ ժամանակահատվածում ավելանում: Բերքահավաքի ժամկետը ճիշտ որոշելու համար նախ և առաջ պետք է ճիշտ ընտրել պտուղների միջին նմուշը:

Քիմիական անալիզների համար վերցրած պտուղների միջին նմուշն իր որակական ցուցանիշներով պետք է տիպիկ լինի տվյալ այգու բերքի համար:

Միջին նմուշը վերցնելու համար, կախված հողատարածքից, լարային այգիներում անցնում են ամեն 3-րդ, 5-րդ, 10-րդ շարքով և շարքի երկարությամբ ամեն 5-րդ ու 10-րդ վազի տարբեր հատվածներից վերցնում պտուղներ, որոնց կշիռը պետք է լինի 1-3 կգ: Թմբային համակարգի այգիներում նույնպես պետք է անցնել այգու երկարությամբ և վերցնել պտուղների միջին նմուշը: Հետո որոշում են քաղցուի շաքարայնությունը, որը կատարում են շաքարաչափի միջոցով, իսկ թթվայնությունը՝ տիտրվող միջոցով: Բերքահավաքը սկսում են այն ժամանակ, երբ որոշվում է պտուղների հասունությունը:



Տեխնիկական սորտերի բերքահավաքը իրականացնում են, երբ նրանց մեջ պարունակվող շաքարայնությունը և տիտրվող թթուների քանակությունը բավարար է գինի պատրաստելու արդյունաբերության համար:

Հավաքած բերքը այգուց հանում են դուլերի, արկղերի, զամբյուղների կամ ինքնաթափ մեքենաների միջոցով: Բերքը փետք է 1-2 ժամվա ընթացքում վերամշակման նպատակով ուղարկել գինու գործարան: Չի կարելի ուշացնել, քանի որ ուշացնելու դեպքում, առավել ևս ամռանը, շաքարասնկերը արագ են բազմանում և հետագայում գինու որակը ընկնում է: Բանվորները միջշաքային տարածությունից հանում են բերքը դուլերով և լցնում ինքնաթափ մեքենայի մեջ, որպեսզի տեղափոխվի գինու գործարան:



Մինչ խաղողագործությունը Հայաստանում տարեկան աճում է, գինու արտահանումը նվազում է: 2015 թվականին աճել է 311.000 տոննա խաղող, ամենաբարձր քանակը, նախորդ չորս տարվա համեմատ:

Խաղողի մեծ մասը գնաց դեպի գինեգործություն:

Չնայած խաղողի արտադրության աճին, վերջին երկու տարիների ընթացքում գինու արտադրությունը նվազել է, ըստ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության:

2013 թվականին Հայաստանում արտադրվել է 6,6 մլն լիտր գինի: 2014 թվականին այն 6,176 միլիոն լիտր էր, իսկ 2015 թ-ին՝ 5,9 միլիոն լիտր:

Կորուստը կարող է կապված լինել ռուսական ռուբլու արժեզրկման և Հայաստանի անդամակցությանը Եվրասիական տնտեսական միությանը (ԵՏՄ): Ռուսաստանից բացի, Հայաստանը շատ չի առևտուր անում ԵՏՄ-ի այլ անդամ պետությունների հետ: 2010 թ. Հայաստանը արտահանել է 924,1 հազար լիտր գինի, որը գնահատվել է 4,1 միլիոն ԱՄՆ դոլար:

2011 թ. - 733.400 լիտր (2.4 մլն դոլար)

2012 թ. 1,186 մլն լիտր ( 4.1 մլն դոլար)

2013 թ.- 1,398.5 մլն լիտր (4.2 մլն դոլար)

2014 թ. - 2,120,7 մլն լիտր (6,3 մլն դոլար)

2015 թ.- 1,451.6 մլն լիտր (4.1 մլն դոլար)

## Խնձոր



Խնձորենին պատկանում է վարդագլխների ընտանիքին: Խնձորենու շատ տեսակներ օգտագործվում են այգիներում և պարդեզներում դեկորացիայի համար: Բնափայտը ամուր է, հեշտ է կտրվում, օգտագործվում է նաև կոնստրուկցիաների և

նավերի պատրաստման համար: Հայաստանում տարածում ունի կովկասիան վայրի խնձորենին, հանդիպում է բոլոր մարզերի անտառներում: Գրանցված է կարմիր գրքում: Ամեն տեղ մշակում են սովորական խնձորենու տեսակները:

Մինչև Դեմիրճիան խնձորը, Հայաստանում տարածված տեսակներն էին.

- ✚ Շերտավոր ամառվա
- ✚ Շշի
- ✚ Ախլախնձոր - Ընտիր խնձորի տեսակ
- ✚ Շաքարկենի- շատ քաղցր խնձորի տեսակ
- ✚ Անարատ
- ✚ Մեղրախնձոր
- ✚ Ուլի
- ✚ Սոխի
- ✚ Չրխկան
- ✚ Տափակ
- ✚ Շաքարալմագի

Խնձորը բնության մեջ ավելի վաղ է հանդիպել քան մյուս մրգերը: Պտուղները իրենց մեջ պարունակում են՝ երկաթ, պղինձ, մոլիբդեն, ֆոսֆոր, կալիում, նատրիում, բարիում, ցինկ:

Խնձորենին խոնավասեր բույս է, բազմաճյուղ է պատվաստներով, բերքատվությունը 150-200 ց/հա է:

Առավել տարածված է Ստեփանավանի, Գուգարքի, Նոյեմբերյանի, Սպիտակի, Սևանի ավազանի, Իջևանի, Գյումրու շրջաններում:

Մշակովի խնձորենին ունի 2-10 մ բարձրություն, օժտված է լայն, բրգաձև սաղարթով: Տերևները լինում են խոշոր և ունեն տարբեր ձևեր: Բույսը միատուն է, տերևները երկսեռ, պսակաթերթերը սպիտակ, հիմքում՝ վարդագույն, սերմնարանը ցածրադիր է, բույսի փոշոտումը խաչաձև է:

Պտղի պարունակության մեջ կան պեկտիններ, շաքարներ (5 - 15%), թթուներ (0,2-1,5%), վիտամիններ (A, B, C), սպիտակուցներ:

## Բերքահավաք և արտահանում

2007թ-ի տվյալներով Գեղարքունիքի մարզում հոկտեմբերի սկզբին սկսվել է խնձորի, չիչխանի և տանձի բերքահավաքը: Բերքահավաքի արդյունքում հավաքվել է 400 տոննա չիչխանի և մինչև 4000 տոննա տանձի ու խնձոր բերք: Տանձի ու խնձորի գինը եղել է 60-150 դրամ, չիչխանինը՝ 300 դրամ: Տանձի և խնձորի մի մասը վաճառվել է, իսկ ավելի դիմացկուն մասը՝ պահեստավորվել:



2011թ-ին խնձորի բերքը, համեմատ անցած տարվան, ավելի շատ է եղել, բայց 2010թ-ի բերքը ավելի որակով էր, քանի որ 2011թ-ի եղանակային պայմանները բարենպաստ չէին լավ բերք ստանալու համար: Իրենց բերքը շուկա էին բերում Ծովինարի, Արծվանիստի, Վարդենիկի, Ձուլաքարի, Ներքին Գետաշենի, Ձովաբերի այգեգործները: Այդ տարի խնձորի գինը 150-200 դրամ էր:

Գեղարքունիքի մարզում պտղի իրացման խնդիր չկար և տարեցտարի աճում էր բարձրորակ պտղի տեսականին ու պահանջարկը:

Բերքը, հավաքելուց հետո, տանում են շուկաներ վաճառելու, իսկ մի մասն էլ պահեստավորում հետո վաճառելու կամ օգտագործման համար: 2015թ-ին բերքը ավելի առատ է եղել քան 2014-ին:

Առատ է ստացվել ոչ միայն խնձորի, այլև սալորի և տանձի բերքը: Սեպտեմբեր ամսին Ծովինարում սպասվում էր 300 տոննա տանձի ու խնձորի բերք: Բերքատվությունը լավ էր, տնտեսություններն էլ գոհ մնացին այդ տարվա բերքից: Քանի որ շուկայում գները շահավետ էին, իրացման խնդիր չեղավ:

Խնձորի բերքահավաքը ավարտվում է հոկտեմբերի երկրորդ կեսին:

Հայաստանից 2012 թ. առաջին եռամսյակում արտահանվել է մոտ 13 տոննա խնձոր՝ 2.6 հազ. դոլար ընդհանուր մաքսային արժեքով: Այսպիսով հայկական խնձորի 1 կգ-ը արտահանվում է մոտավորապես 80 դրամով: Խնձորը արտահանվել է վերամշակման նպատակով: Այդ տարի ներքին շուկայում խնձորի գինը եղել է 200-600 դրամի սահմաններում:

Մեծ մասամբ Հայաստանից խնձոր արտահանվել է դեպի Վրաստան:

Լավագույն տարիներին արտահանվում է 25-30 տոննա խնձոր: Այդ տարիներին բերքը կարող է հասնել մինչև 160 հազար տոննայի:



2018թ-ի մարտ ամսին Հայաստանից Ռուսաստան արտահանվող խնձորը բեռնատարներով մնացել են Վերին Լարսի անցակետում:

Այս տարվա մարտի 7-ի տվյալներով, արդեն շուրջ 20 օր, Օհանավանից Ռուսաստան խնձոր արտահանող 23 բեռնատարներ կանգնած էին անցակետում:

Իրենց բողոքը արտահայտելու համար, Օհանավան գյուղի բնակիչները փակել էին գյուղով անցնող միջպետական ճանապարհը, որպեսզի պետական մարմինները ուշադրություն դարձնեն գյուղացիների խնդրին:

Օհանավանի գյուղապետը նշեց, որ խնդիր է առաջացել այն պատճառով, որ մի քանի արկղերի վրա չեն եղել <<Արտադրված է Հայաստանում>> պիտակները: Գյուղապետի խոսքով, տարիներ շարունակ խնձոր են արտահանում Ռուսաստան և երբեք այդպիսի խնդրի առաջ չեն կանգնել:

Խնդիրն ուսումնասիրվեց նաև ՀՀ սննդի անվտանգության պետական ծառայությունում: Նրանք հայտնեցին, որ արտահանվող ապրանքը փաստաթղթային ձևակերպման, սերտիֆիկատի անհամապատասխանության և ուղեկցող փաստաթղթերի խնդիր չունի:

23 բեռնատարներում էլ եղած խնձորը աճեցրել էին հենց գյուղացիները:

## Դեղձ



Դեղձենին պատկանում է վարդագգիների ընտանիքին:

Սովորական դեղձենու բարձրությունը 8մ է, օժտված բաժակաձև, կլորավուն սաղարթով: Տերևները նշտարաձև են, երկարավուն, ունեն ատամնավոր եզրեր: Գրեթե բոլոր սորտերը առաջացել են հենց այս տեսակից:

Դեղձենու պտուղը՝ դեղձը կլորավուն է, կարող է լինել նաև ձվաձև, հյութալի կորիզապտուղ է, դեղնավարդագույն կամ դեղնակարմրավուն: Կորիզը խոշոր է, դառը, պտղամաշկը թավոտ է, լինում է նաև անթավ, որը կոչվում է նեկտարինի; պտղամսի

գույնը դեղին է կամ սպիտակ: Պճղովի տեսակների կորիզի անջատումը պտղամսից հեշտ է, իսկ հյուլիների կորիզը պտղամսից չի անջատվում:

Հայաստանում մշակվում են ՝ լիմոնի, ճուղուրի, նարնջի և զաֆրանի տեսակները, որոնք բոլորն էլ թավոտ են, սակայն կան քիչ քանակությամբ անթավ, այսինքն մերկ սորտեր:

Լինում են վաղահաս, միջահաս և ուշահաս: Վաղահաս տեսակների հասունացման շրջանը հուլիսի կեսերից մինչև օգոստոս ամիսներն են, միջահասերինը՝ օգոստոսի կեսերից մինչև սեպտեմբերի 2-րդ կեսը, իսկ ուշահասերինը հոկտեմբեր ամիսը: Պտղի պարունակության մեջ կան շատ վիտամիններ, օրգանական թթուներ, պեկտիններ, հանքային աղեր:



## Բերքահավաք և արտահանում

Նաիրի գյուղում՝ դեղձի ամենահին այգում, թեն ծառերը ծերացել են, բայց չեն դադարում առատ բերք տալ: 1.5 հեկտար տարածքից ստացվում է մինչև 25 տոննա դեղձ: Դրանից մի մասը գյուղացիները արտահանում են, որոշ մասը հանձնում մթերողներին և չրագործներին, մնացածն էլ վաճառում տեղական շուկայում:

Գյուղացու խոսքով, յուրաքանչյուր արտադրողի համար լավ է, որ իր բերքը վաճառի միանգամից այգու միջից:

Գյուղը հայտնի է դեղձի այգիներով: Ամեն գյուղացի ունի իր դեղձանոցը, դա նրանց համար նաև պատվի հարց է: Առաջինը լինելու համար շատերը ստանում են նոր տեսակներ: Օրինակ՝ այգեգործներից մեկը իր աճեցրած դեղձը արտահանում է Ռուսաստան 300 դրամով և ասում, որ դժգոհ չէ գնից:

Մթերող ընկերություններին հանձնում են 1կգ-ը 40 դրամով, իսկ ներքին շուկայում հատընտիրները վաճառում գրեթե արտահանման գնով: Համայնքում գործող չորանոցները ևս նպաստել են բերքի անկորուստ իրացմանը, դրանց թիվը այնքան է աճել, որ գյուղացիների մեծ մասին ապահովել են սեզոնային աշխատանքով:

Ինչ վերաբերում է արտահանմանը, 2013թ-ին ավելի շատ դեղձ է արտահանվել քան նախորդ տարում:

Բերքի մթերումը սկսվել էր օգոստոսի 9-ից: Մինչև օգոստոսի 14-ը արդեն մթերվել էր 108 տոննա դեղձ: Մթերման նպատակով դեղձը ուղարկում են գործարաններ և այլ փոքր կազմակերպություններ:

2014թ-ի օգոստոսի 22-ի դրությամբ արտահանվել էր 780 տոննա դեղձ, երբ նախորդ տարի մինչև օգոստոսի 20-ը արտահանվել էր 350 տոննա, իսկ ամբողջ տարվա ընթացքում՝ 955 տոննա բերք:

2013թ-ի հուլիսի վերջին թեև նոր էր սկսվել դեղձի մթերումը, սակայն բավականաչափ բերք էր մթերվել:

Տավուշի մարզում հուլիսի 28-ի դրությամբ բերքահավաքը սկսվել էր 4-5 օր առաջ: Այստեղ արդեն մթերվել էր մոտավորապես 60-70 տոննա դեղձ:



Ըստ 2015 թ-ի օգոստոսի կեսերի, առավել հյուսիսի և համեղ պտուղները Արարատյան դաշտում հասունացել էին: Այդ տարի եղանակային պայմանները չխանգարեցին պտուղների հասունացմանը: Գյուղացիները նախատեսում էին հավաքել գրեթե 70 հազար տոննա, ինչը մի քանի անգամ ավելի էր, քան անցած տարիներին:

Մեկ ծառից ստացվում է մինչև 30 կիլոգրամ հյուսիսի պտուղներ: Արարատյան դաշտում աճեցված մրգերը համարվում են լավագույնը Հայաստանում: Այստեղ հողը, մաքուր օդը և շատ արևը նպաստում են լավ բերք ունենալուն: Հետևաբար, տեղական դեղձերը հյուսիսի և քաղցր են, քան երկրի այլ շրջաններում:

Տեղական շուկայում դեղձի գինը երկու անգամ աճել է: Լավագույնները, ինչպես նախկինում, արտահանվում են: Այս տարի այն ավելացել է մի քանի անգամ: Ընդունման կետերում ամեն օր մի քանի հարյուր կիլոգրամ դեղձ են բերում, դրանք կշռում և բեռնվում են վագոններ: Այնուհետև հայկական պտուղները արտահանվում են Ռուսաստան, Վրաստան, Ղազախստան և Միացյալ Արաբական Էմիրություններ:



Այս հրատարակությունը (խմբագրությունը) ներկայացնում է <<Հայաստանի գյուղական համայնքներում ագրոկենսաբազմազանության պահպանության և օգտագործման միջոցով կենսապայմանների բարելավում>> ծրագրի արդյունքների մի մասը: Սույն Գլոբալ Էկոլոգիական Հիմնադրամի (ԳԷՀ) կողմից աջակցվող ծրագիրը համակարգվում է Բիովերսիթի Ինիթիատիվայի (IPGRI) կողմից ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագրի իրականացման աջակցությամբ (UNEP):